

Թիւ 1620
Հոկտեմբեր 24, 1960

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Վրդ. Թաղոյեան
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի
Մօնթրէալի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին

Սիրելի Հայր Սուրբ,

Ստացած ենք 1960 Հոկտ. 6 թուագրեալ պատուարժան Միական Խորհուրդի տեղեկագիրը, որով կը տեղեկացնեն թէ Ձեր նախագահութեամբ գումարուած ծխական ժողովին մէջ կատարուած է Միական Խորհուրդի լրիւ կազմին ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրեն ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ վերոյիշեալ ընտրութիւնը կատարուած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած անձերը իբրեւ եկեղեցւոյ հաւատարիմ եւ նախանձախնդիր անդամներ, կը վայելեն Ձեր համայնքի վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը ըստ հեռեւեալին.-

- Տիարք՝ Ազգըպրիթեան Սուրէն
- Անդրէասեան Ազատ
- Դշխոյեան Վարդգէս
- Միրոյեան Խաչիկ
- Պզտիկեան Վահան
- Պտուքեան Քերովրէ
- Սենթերեան Վարդան
- Սուքիասեան Նուպար
- Քէսթէթեան Յակոբ

Կօրհնենք նորընտիր անդամները եւ կը մաղթենք Ձեզի ու պատուարժան Միական Խորհուրդի միասիրտ եւ արդիւնաւոր գործունէութիւն՝ յօգուտ համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին հոգեւոր շինութիւն ու յառաջդիմութիւն եւ ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Դիտել կու տանք թէ սոյն տեղեկագիրը պէտք է ստորագրուած ըլլար Ձեր եւ ծխական ժողովի ղիւանին կողմէ: